Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
փետրվարի 5-ի N 115-Ն որոշման

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում արտոնագրային և արդյունաբերական նմուշների հավատարմատարների (այսուհետ նաև` հավատարմատար) մասնագիտական գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հավատարմատար համարվում է այն անձը, որին արդյունաբերական սեփականության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրության համաձայն իրավունք է վերապահված գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների հայտերը ներկայացնելու, հայտերով նամակագրության վարման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավունքների ձեռքբերման և տնօրինման հարցերով ֆիզիկական և իրավաբանական անձանց ներկայացնելու Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունում (այսուհետ` նախարարություն):

3. Որպես հավատարմատար չեն կարող գրանցվել նախարարության աշխատողները, ինչպես նաև այն անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան արգելված է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

### II. ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ՈՒ ԳՐԱՆՑՈՒՄԸ

4. Հավատարմատարների որակավորումն ու գրանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ նախարար) հաստատած կարգով:

5. Որակավորման քննություն հանձնած թեկնածուն որպես հավատարմատար գրանցվում է իր դիմումի համաձայն, որին կցվում են օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերը:

6. Նախարարությունը դիմումն ստանալուց հետո ընդունում է որոշում հավատարմատարին գրանցելու մասին և նրան գրանցում է արտոնագրային հավատարմատարների կամ արդյունաբերական նմուշների հավատարմատարների՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում:

7. Արտոնագրային հավատարմատարը կարող է դիմել նախարարություն՝ իրեն արտոնագրային հավատարմատարների գրանցամատյանից արդյունաբերական նմուշների հավատարմատարների գրանցամատյան տեղափոխելու խնդրանքով: Արդյունաբերական նմուշների հավատարմատարը կարող է դիմել նախարարություն, որ իրեն արդյունաբերական նմուշների հավատարմատարների գրանցամատյանից տեղափոխեն արտոնագրային հավատարմատարների գրանցամատյան:

8. Նշված դիմումները բավարարվում են, եթե հավատարմատարը համապատասխանում է «Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

II. ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հավատարմատարի գործունեության իրավունքը ծագում է նրա գրանցման պահից:

10. Հավատարմատարը կարող է իր գործունեությունը սահմանափակել արդյունաբերական սեփականության առանձին օբյեկտներով (գյուտերով, օգտակար մոդելներով, արդյունաբերական նմուշներով, ապրանքային (սպասարկման) նշաններով, ապրանքների ծագման տեղանուններով), որը հաշվի է առնվում որակավորման քննություն անցկացնելիս:

11. Հավատարմատարն իրավունք ունի ներկայացնելու ցանկացած անձի՝ իր հետ կնքած պայմանագրի հիման վրա:

2. Հավատարմատարի իրավասությունը հաստատվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրով:

3. Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող ֆիզիկական անձինք և օտարերկրյա իրավաբանական անձինք լիազորագիրը ձևակերպում են այն օտարերկրյա պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով, որտեղ դա կազմվում է:

4. Հավատարմատարը պարտավոր է լիազորագիր տված անձի կողմից իրեն վստահված տեղեկատվությունը պահել գաղտնի, եթե լիազորագիր տվող անձից այլ հանձնարարություն չի ստացվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ